Հասցեն՝ Երևան, Աբովյան 22/ա
Հեռախոս/ֆաքս. 010 54 64 23
Կայք՝ www. armlur.am
Էլ փոստ info.armlur@gmail.com
info.zhoghovurd@gmail.com

**Գեղարքունիքի մարզպետարանի**
**Աշխատակազմի ղեկավար**
Սևակ Խլղաթյանին

**«Ժողովուրդ» օրաթերթի առցանց**

**ArmLur.am-ի լրագրող**

Տաթև Հարությունյանից

**Դիմում**

*Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.*

Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ համայնքի Մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն է նշանակվել Նելլի Ամիրխանյանը: Նշանակման ժամանակ նա դեռևս բակալավրի 3-րդ կուրսի ուսանողուհի է եղել: Ինչպես հայտնի է՝ մանկապարտեզի տնօրենի նշանակման կարգի համաձայն՝ պարտադիր է ոչ միայն բարձրագույն կրթությունը, այլև 5 տարվա համապատասխան աշխատանքային ստաժը, որը, ըստ ամենայնի, այս պարագայում բացակայել է:

Խնդրում ենք պարզաբանել.

1. Հայտարարվե՞լ է արդյոք մրցույթ մանկապարտեզի տնօրենի պաշտոնի համար:
2. Արձակվե՞լ է արդյոք նշանակման հրաման:
3. Ինչպես հայտնի է՝ վերոհիշյալ մանկապարտեզում ԿԳ նախարարության տեսչությունը ուսումնասիրություններ էր իրականացրել, որոնց արդյունքում հանձնարարվել էր կադրային փոփոխություններ իրականացնել: Այս առիթով ունեցե՞լ է մարզպետարանը նպատակային գործուղված անձ:
4. Արդյոք նշանակված տնօրենը համայնքապետի ներկայացրած /առաջարկած կադրն է: Ի՞նչ համապատասխան քայլեր են ձեռնարկել մարզպետարանն ու համայնքապետը չափորոշիչներին համապատասխան կադր ունենալու նպատակով:

**Կանխավ շնորհակալ եմ՝**

**Տաթև Հարությունյան**

**11.02.2016թ.**